

ԺԵ-82

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈԿՅԱՆՆԵՍ ԳԵՈՐԳԻԻ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՅՄՐԿՈՎԿԱՍԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
(ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2007

28-այ

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ. Յ.


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների
դոկտոր ԲՈՍՅԱՆ Ա. Վ.
պատմական գիտությունների
թեկնածու ՄՈՎՍԻՍՅԱՆ Ա. Ե.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է ապրիլի 17-ին, ժամը 14.00-ին ՀՀ
ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի 004 Հայոց
պատմության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 375019,
Երևան, Սարշալ Բաղրամյան պող., 24գ.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ. մարտի 16 - ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու
 Գ.Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Թեմայի գիտական նշանակությունը և արդիականությունը. Աքեմենյան տիրա-
պետության ժամանակաշրջանն Առաջավոր Ասիայում կարևոր նշանակություն ու-
նի Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմության համար, իսկ Հայաս-
տանի և Այսրկովկասի պատմական աշխարհագրության համակողմանի ուսում-
նասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում ոչ միայն հայագիտության,
այլև կովկասագիտության ու արևելագիտության համար: Այն շահեկան է նաև հայ,
վրացի և այլ ժողովուրդների քաղաքական պատմության քննության առումով:

Հայաստանի և Այսրկովկասի պատմական աշխարհագրության ուսումնասի-
րությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլև կարևոր քաղաքական նշանակու-
թյուն, քանի որ թուրք, ադրբեջանցի և այլ պատմաբաններ հետապնդելով հեռուն
զննարկ քաղաքական նպատակներ, փորձում են նենգափոխել հայ ժողովրդի
պատմությունը և պատմա-աշխարհագրական շատ իրողություններ: Այդ իսկ
պատճառով, Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմական աշխարհա-
գրությանը նվիրված ամեն մի կարևոր հետազոտություն հավուր պատշաճի պա-
տասխան է մեր հարևան երկրների պատմաբանների նենգափոխումներին և քա-
ղաքական նկրտումներին:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները. Մենք մեր առջև նպատակ ենք
դրել կատարելու Հայաստանի և Այսրկովկասի Աքեմենյան ժամանակաշրջանի
վարչական բաժանման համալիր ուսումնասիրություն և քննության առնելու Հա-
յաստանի և Այսրկովկասի էթնիկական կազմը:

Ըստ այդմ, քննության են առնվել հետևյալ խնդիրները.

- ա. Աքեմենյան Պարսկաստանի XIII սատրապության տեղորոշումը, տարած-
քը, սահմանները և էթնիկական կազմը,
- բ. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղորոշումը, տա-
րածքը, սահմանները և էթնիկական կազմը,
- գ. Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության տեղորոշումը, տարած-
քը, սահմանները և էթնիկական կազմը:

Ուսումնասիրության գիտական նորույթը. Ատենախոսության թեման, ընդհա-
նուր առմամբ, մեզանում դեռևս հատուկ ուսումնասիրության չի արժանացել, թեև
XIII, XVIII և XIX սատրապությունների պատմական աշխարհագրության որոշ հիմ-
նահարցեր ուսումնասիրության առարկա են դարձել մի քանի հայ և օտարագի
ուսումնասիրողների կողմից: Դեռ մինչև օրս XIII, XVIII և XIX սատրապություննե-
րի վարչական կացության և դրանց էթնիկական կազմի վերաբերյալ ամբողջական
ուսումնասիրություն հրապարակի վրա չկա: Սույն ատենախոսությունն այդ հիմ-
նահարցերի հնարավորին չափ համակողմանի և ամբողջական ուսումնասիրու-
թյան առաջին փորձն է:

*Ուսումնասիրության ժամանակագրական ու աշխարհագրական շրջանակնե-
րը.* Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է Դարեհի Ա-ի
վարչական վերափոխումներից մինչև Աքեմենյան պետության կործանումն ընկած
ժամանակահատվածը, այսինքն՝ մոտ երկու հարյուրամյակ՝ մ. թ. ա. 520-ական
թվականներից մինչև մ. թ. ա. 331 թվականը: Ատենախոսության տարածական
շրջանակն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը, այսրկովկասյան տարածքնե-
րը, Փոքր Ասիայի արևելյան շրջանները, Հյուսիսային Սիջազետքը, միջինասիա-
կան որոշ երկրներ և այլն:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը. Ուսումնասիրության մեջ փաստերը
հետազոտված ու մեկնաբանված են պատմական անաչառության, համեմատա-

կան վերլուծության ու համադրման քննական մեթոդների հիման վրա:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը. Ատենախոսությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլև գործնական նշանակություն: Նրանում կատարված ուսումնասիրությունը, տեղադրություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմության, պատմական աշխարհագրության ու ժողովրդակազմավորման խնդիրներին նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում:

Ուսումնասիրության փորձաքննությունը և հրապարակումները. Ատենախոսությունը քննարկվել ու պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության հինատիտուտի հին դարերի պատմության բաժնի նիստում: Ուսումնասիրության բովանդակությունը հիմնականում արտացոլված է հեղինակի «Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում», «Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ» և «Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էքնիկական կազմի վերաբերյալ» հոդվածներում:

Սկզբնաղբյուրների համառոտ տեսություն. Հին Հայաստանի և նրա հյուսիսային հարևան երկրների պատմական աշխարհագրությանը վերաբերող մեզ հասած աղբյուրները կարելի է բաժանել երեք խմբի ա) սեպագիր արձանագրություններ, բ) հունա-հռոմեական հեղինակների երկեր և գ) հայ մատենագիրների աշխատություններ:

Սեպագիր արձանագրությունների մեջ, բնականաբար, առաջին տեղը զբաղեցնում են Աքեմենյան արքաների թողած արձանագրությունները¹, որոնց մեջ իր նշանակությամբ առանձնանում է Բեհիստունի եռալեզու արձանագրությունը: Պատմա-աշխարհագրական որոշ խնդիրներ լուսաբանելու համար անհրաժեշտության դեպքում, դիմել ենք վանյան², ասուրաբաբելական³ սեպագիր արձանագրությունների տեղեկություններին:

Աղբյուրագիտության առումով խիստ կարևոր են հունական աղբյուրները: Հատկապես արժեքավոր են և առաջնակարգ նշանակություն ունեն Հերոդոտոսի⁴, Քսենոփոնի⁵, Ստրաբոնի⁶ աշխատությունները, որտեղ, պետք է ասել, հավաստի և

արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Հայաստանի և նրան հարևան երկրների մասին:

Թեմայի քննության համար նշանակալից արժեք են ներկայացնում նաև Արիանոսի¹, Կուրտիոս Ռուփոսի², Կլավդիոս Պտղոմեոսի³, Պլինիոս Ավագի⁴, Դիոդորոս Սիկիլիացու⁵, Զովսեպոս Փլավիոսի⁶, Պլուտարքոսի⁷, Սկիլաքս Կարիանացու⁸, Ապոլլոնիոս Բյուզանդացու, Պոմպոնիոս Մելասի, Կելծ-Արիանոսի, Դիոնիսիոսի, Ստեփանոս Բյուզանդացու, Պրիսկիանոսի, Պալեոֆատոսի, Էլլանիկոս Միտիլենացու և ուրիշների աշխատությունները⁹: Այս հեղինակներն օգտվել են բազմաթիվ և տարաբնույթ տարբեր ժամանակների աղբյուրներից: Ուստի, նրանց տեղեկությունները քննել ենք ժամանակի և տարածության մեջ:

Հայ մատենագիրների երկերից առանձնապես արժեքավոր են Մովսես Խորենացու¹⁰ և Թովմա Արծրունու¹¹ աշխատությունները, որոնց տեղեկությունների համեմատական վերլուծությունը սեպագիր և հունական սկզբնաղբյուրների հենքի վրա բացահայտում են կարևոր պատմա-աշխարհագրական իրողություններ:

Մեր ատենախոսության համար օժանդակ դեր ունեն բյուզանդական¹² և վրացական¹³ սկզբնաղբյուրները:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը. Հայ և օտար պատմագիտության մեջ երկար ժամանակ գերիշխող է եղել այն կարծիքը, թե մ. թ. ա. VI-IV դարերում Հայաստանի տարածքը բաժանված է եղել երկու վարչական միավորների՝ XIII և XVIII սատրապությունների: Հայկական լեռնաշխարհի տարածքի բաժանումը XIII և XVIII սատրապությունների ընդունել են Ն. Ագոնցը¹⁴, Գր. Ղափանցյանը¹⁵, Զ.

¹ Տես Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը.-«Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987:

² Տես Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը.-«Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987:

³ Տես Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, voluminis primi, pars secunda, Parisiis, 1901, Claudii Ptolemaei Geographia, edidit. C. F. A. Noebs, t. I, Lipsiae, 1843.

⁴ Տես Plinii Secundi C., Naturalis historiae, vol. 1-10, Cambridge, Mass.-London, 1950-62 (Loeb Classical Library).

⁵ Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Հին հունական աղբյուրներ», Բ. Դիոդորոս Սիկիլիացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985:

⁶ Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Հին հունական աղբյուրներ», Ա. Զովսեպոս Փլավիոս, Դիոն Կասիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976:

⁷ Տես Плуларх. Избранные жизнеописания, т. I-II, Москва, 1987, Պլուտարքոս, Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ս. Գրքաշարյան, Երևան, 2001:

⁸ Տես Скилак Карнавалский, Перилы обитасмого моря.-«Вестник древней истории», 1988, թիվ 1-2:

⁹ Անտիկ աղբյուրների տեղեկություններն ի մի են բերված Վ. Լատիշևի հայտնի ժողովածուում (տես Латышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе.- «Вестник древней истории», 1947-1949, թիվ 1-4):

¹⁰ Տես «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», քննական բնագիրը Ս. Արեղյանի և Ս. Դարությունյանի, Երևան, 1991:

¹¹ Տես Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Կարդանյան, Երևան, 1985:

¹² Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ. Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Զ. Բարթիկյանի, Երևան, 1970:

¹³ Տես Մելիքսեթ-Քել Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934:

¹⁴ Տես Ագոնց Ն., Հայաստանը Զուստիմիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 433, ծանոթ. 1:

¹⁵ Տես Кашапан Гр., Хагаса-колыбель армян. этногенез армян в их начальная история, Ереван, 1947, с. 157, 202.

¹ Տես «Դարեհ Կշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի, Երևան, 1964, Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon, 2nd ed., New Haven, 1953, «Les inscriptions de la Perse achéménide», traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq, Gallimard, Paris, 1997, Malbran-Labat F., La version akkadienne de l'inscription trilingue de Darius à Behistun, Roma, 1994.

² Տես Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, Меликитшвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960, Կարազյոզյան Հ., Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին,-«Հայ ժողովրդի պատմության քրեստոմատի», հ.1, Երևան, 1981:

³ Տես Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту.-«Вестник древней истории», 1951, թիվ 2-4, Luckenbill D., Ancient Records of Assyria and Babylonia, vols. I-II, Chicago, 1926-1927.

⁴ Տես Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, Геродот, История в девяти книгах, перевод и примечания Г. Стратановского, Ленинград, 1972.

⁵ Տես Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, Կյուրուպեղիա, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000:

⁶ Տես Ստրաբոն, Քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, Երևան, 1940, «The Geography of Strabo», with an English translation by H. L. Jones, in eight volumes, London, 1969 (Loeb Classical Library), Страбон, География в 17 книгах, перевод, статья в комментарии Г. Стратановского, Ленинград, 1964.

Սաննդյանը¹, Բ. Պոտորովսկին², Ի. Դյակոնովը³, Մ. Գանդամանը⁴, Ռ. Դյուսընը⁵, Ս. Երեմյանը⁶, Ֆ. Տեր-Մարտիրոսովը⁷ և ուրիշներ: Հայաստանը երկու սատրապությունների բաժանելու տեսությունը զարգացրել են Գ. Տիրացյանը⁸ և Գ. Սարգսյանը⁹: Գրեթե բոլոր ուսումնասիրողները հարցին փորձել են անդրադառնալ հայ ժողովրդի կազմավորման գործընթացի վերաբերյալ սեփական վարկածների տեսանկյունից, որտեղ հիմնականը հայերի եկվոր լինելն է: Հակառակ նշված հեղինակների, Բ. Հարությունյանն իր XVIII սատրապության տեղադրությանը նվիրված աշխատության մեջ ցույց է տվել, որ XVIII սատրապությունը գտնվել է Կուր գետի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի միջև: Մեր քննությունը նույնպես ապացուցում է այդ իրողությունը, ուստի Հայաստանի, Այսրկովկասի և Սև ծովի հարավ-արևելյան շրջանի պատմության, պատմական աշխարհագրության և էթնիկական կազմի ուսումնասիրության համար օգտագործել ենք Բ. Հարությունյանի այլ աշխատությունները ևս¹⁰:

Թեմայի քննության համար արժեքավոր են Գ. Մելիքիշվիլու Հայաստանի, Այսրկովկասի և Սև ծովի հարավ-արևելյան շրջանի պատմական աշխարհագրության հարցերին և էթնիկական կազմին վերաբերող աշխատությունները, որոնցում սակայն հեղինակը մեզ հետաքրքրող որոշ հարցերի քննությանը մոտենում է վրաց ժողովրդի կազմավորման տեսանկյունից¹¹:

Այսրկովկասի Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրության առարկա է դառնում մաս Ադրբեջանում: Վերջերս հրատարակվեց Ռ. Մելիքովի «Ադրբեջանի էթնիկական պատկերը Աքեմենյան

տիրապետության ժամանակաշրջանում (մ. թ. ա. VI-IV դդ.)» աշխատությունը¹, որտեղ հեղինակը ելնելով քաղաքական որոշակի նկրտումներից, խեղաթյուրում է փաստերը և նենգափոխում պատմությունը:

ՈՒՍՈՒՄԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒԹՅԱԾԸՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու մեկ հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 145 էջ:

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, տրվում են աշխատության նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը կրում է «ԱԲԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍՎԱՍԱՆԻ XIII ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ» խորագիրը: Հերոդոտոսի աշխատությունից պարզվում է, որ Հայաստանը Պակտյուիկեի և ուրիշ ցեղերի հետ, որոնց անունը մա չի տալիս, մինչև Եվքսինյան ծովը ներառվում է XIII սատրապության մեջ, որը վճարում էր 400 տաղանդ հարկ²: Պատմահայրը Պակտյուիկե անունով երկիր և պակտյուացիներ անունով ժողովուրդ հիշատակում է մաս ներկայիս Աֆղանստանի տարածքում³: Սակայն քննելով Պակտյուիկեի տեղադրության վերաբերյալ պատմագիտական գրականության մեջ եղած տարբեր կարծիքները, մենք ևս միանում ենք Բ. Հարությունյանի տեսակետին: Մ. թ. ա. 625 թվականից հետո Արամ-Արամանի-Էրիմենան գրավում է Կապադովկիայի արևելյան շրջանները, որոնք այդ վաղնջական ժամանակներում «Պատուկա» կամ թերևս «Պակտուկա» էին կոչվում և նույնանուն էին Սոպսես խորեմագու «Պռոտին Արմենիա»-ին⁴: Դատելով Հերոդոտոսի որոշ տեղեկություններից, Պակտյուիկեն գտնվել է XIII սատրապության արևմուտքում: Այս առումով արժեքավոր է պարսից «Արքայական ճանապարհի» երթուղու այն հատվածի քննությունը, որն անմիջականորեն առնչվում է Հայաստանին և հարևան երկրներին: Ըստ Հերոդոտոսի, Փռյուզիայից հետո ճանապարհն անցնում էր Կապադովկիայով և մտնում Կիլիկիա, որի միջով ճանապարհը ձգվում էր երեք կայան տասնհինգ և կես փարսալի, իսկ Կիլիկիայի և Հայաստանի սահմանը Եփրատ անունով նավարկելի գետն էր⁵: Պատմահորը մեկ այլ տեղեկությունում ևս կիլիկեցիներից հետո հիշատակվում են արմենները⁶: XIII սատրապության հյուսիս-արևմտյան, արևմտյան և հարավային սահմանների հստակեցման համար անհրաժեշտաբար պարզել ենք հարևան երկու երկրների Կիլիկիայի և Կապադովկիայի աշխարհագրական սահմանները: IV կամ Կիլիկյան սատրապությունը արևմուտքում սահմանակից էր թիվ I սատրապությանը և երկու սատրապությունների միջև ընդհանուր սահմանը եղել է Կիլիկյան Տավրոսի ծայր արևմտյան հատվածը: Կիլիկյան սատրապության բնական սահմանը հյուսիսում Կիլիկյան Տավրոսն էր և Անտիտավրոսի հարավային լեռնաճյուղերը: Կիլիկիայի և

¹ Տես Սաննդյան Դ., Թեմական տեսություն հայ ժողովրդի պատմության, -Երկեր, հ.Ա, Երևան, 1977, էջ 62-64:

² Տես Пигорский Б., История и культура Урарту, Ереван, 1944, с. 136, 335, Ванское царство, Москва, 1959, с. 122 и сл.

³ Տես Дьяконов И., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 188, 238, История Минци, Москва-Ленинград, 1956, с. 343, 354-355.

⁴ Տես Дашдмазян М., Луконин В., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 111.

⁵ Տես Hewsen R., The boundaries of Achaemenid «Armina», - «Revue des Études Arméniennes», t. XVII, Paris, 1983, p. 123-143.

⁶ Տես Երեմյան Ս., Հայկական առաջին պետական կազմավորումները (VII-VI դդ. մ. թ. ա.) - «Պատմա-բանասիրական հանդես», 1968, թիվ 3, էջ 109:

⁷ Տես Тер-Мартиросов Ф., Границы ахеменидских владений в Закавказье (V век до н. э.) - «Պատմա-բանասիրական հանդես», 1998, թիվ 3, էջ 133-142, Границы Армении в Закавказье (IV-II вв. до н. э.) - «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թիվ 1, էջ 298-306:

⁸ Տես Տիրացյան Գ., Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո, - «Հայ ժողովրդի պատմություն», ՀԱՍՅ ԳԱ հրատ., հ. Ա, Երևան, 1971, էջ 450-452, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), - «Պատմա-բանասիրական հանդես», 1980, թիվ 4, էջ 84-95, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ-մ. թ. ա. III դ. վերջ), - «Պատմա-բանասիրական հանդես», 1981, թիվ 2, էջ 68-84, Անաբասիսը և Հայաստանը, -Անաբասիս, էջ 221-239:

⁹ Տես Սարգսյան Գ., Պատմահայր Հերոդոտոսը, -Հերոդոտոս, էջ 568-578, Ուրարտական տերությունը և հայերը, -Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 68-70:

¹⁰ Տես Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, -«Հանդես Ամսորեայ», Վիեննա, 1999, թիվ 1-12, էջ 45-114, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դդ.), Երևան, 1998, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н. э., -«Պատմա-բանասիրական հանդես», 1998, թիվ 1-2, էջ 233-246 և այլն:

¹¹ Տես Меликшвили Г., Наир-Урарту, Тбилиси, 1954, К истории древней Грузии, Тбилиси, 1959.

¹ Տես Меликов Р., Этноическая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.), Баку, 2003.

² Տես Հերոդոտոս, III, 93:

³ Անդ, III, 102, IV, 44, VII, 68:

⁴ Տես Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 78-79:

⁵ Տես Հերոդոտոս, V, 52:

⁶ Անդ, V, 49:

Սիրիայի սահմանն անցնում էր Պոսիդեոն քաղաքով¹, որը Լաոդիկեայից հյուսիս գտնվող Պոսիդիոնն է Կասիոս լեռից (Ջեպել Աքրա) հարավ: Կիլիկյան սատրապության հյուսիս-արևելյան սահմանների մասին տեղեկությունները բավականին կցկուր են:

Կապադովկիացիներն այլ ազգերի հետ միասին կազմել են III սատրապությունը, որի սահմանը հյուսիս-արևելքում եղել է Թերմոդոնտը, իսկ հարավում մինչև մ. թ. ա. V դարի կեսերը, կապադովկիացիները չեն տարածվել Հալիսից հարավ: Կիլիկիայի և Կապադովկիայի հետ Սատրապական Հայաստանի սահմանների պարզաբանման համար ուշադրություն ենք դարձրել Հերոդոտոսի այն կարևոր տեղեկության վրա, որտեղ հայտնվում է, որ Հալիսը հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով²:

Պատմահոր այս տեղեկությունում Կիլիկիան աշխարհագրական և վարչական առումով առանձին միավոր է, որն աշխարհագրորեն լիովին տարբերվում է Կիլիկիա սատրապությունից, և ոչ մի հիմք չկա Կիլիկյան սատրապության սահմանը հյուսիսում հասցնել այդքան հեռու: Հերոդոտոսի տվյալ տեղեկության Կիլիկիան որպես աշխարհագրական և վարչական միավոր, իրականում տարածվել է Կեսարիա-Մաժակի շրջանում, որը թերևս աստրական աղբյուրների հիշակելու երկիրն է: Հերոդոտոսը «Արքայական ճանապարհի» մասին գրելիս նշում է, որ ճանապարհի մի հատվածը Կապադովկիայից հետո շարունակվել է Կիլիկիայով և Կիլիկիայով (IV սատրապություն) անցնող հատվածն ունեցել է ընդամենը 15,5 փարսան (շուրջ 90 կմ) երկարություն: Փաստորեն, եթե մենք ևս մի պահ ընդունենք, որ Կապադովկիան և Կիլիկիան սահմանակցել են Կեսարիա-Մաժակի շրջանում, ապա այս դեպքում լիովին կանտեսենք Հերոդոտոսի այն շատ հստակ ցուցումը, որ ճանապարհը Կիլիկիայից հետո մտել է Հայաստան և անենակարևորը՝ Եփրատը եղել է Կիլիկիայի և Հայաստանի սահմանը: Հետևաբար, եթե ճանապարհի Կիլիկյան սատրապությունով անցնող հատվածի մեկնակետը սկսենք Կեսարիա-Մաժակից, ապա հատվածի այդ փոքր երկարությունը (շուրջ 90 կմ) ոչ մի դեպքում չի հասնի Եփրատ: Սակայն որոշ ուսումնասիրողներ, այդ թվում և Հ. Մանանդյանը, հենվելով Հերոդոտոսի տեղեկության վրա (V, 52), կատարել են կամայական պատմա-աշխարհագրական վերածնունդներ և Մելիտի-նեն համարել Կիլիկիայի մաս³, դրանով Կիլիկյան սատրապությանը հյուսիս-արևելքում հատկացնելով ահեղի տարածքներ:

Ընդհանրապես, պարսից տերությանը նվիրված պատմա-աշխարհագրական որոշ քարտեզներում «Արքայական ճանապարհի» Կապադովկիայով անցնող հատվածի կարևոր կայաններից մեկը նշված է Պոնտոսի Կոմանան, որտեղից ճանապարհը կտրում էր Հալիսը և հասնում Մելիտին, որը Կիլիկիայի մասն էր համարվում: Սակայն մեր քննությունը ցույց է տալիս, որ ճանապարհի նման երթուղու դեպքում Հայաստանը փաստորեն զրկվում էր Եփրատից արևմուտք ընկած իր տարածքներից (հետագա Փոքր Հայքի տերիտորիան), որը լիովին հակասում է Հերոդոտոսի այն տեղեկությանը, թե Հալիսը հոսում է Հայկական լեռներից: Միաժամանակ ընդգծել ենք, որ Կիլիկիայի և Հայաստանի սահմանը նավարկելի գետն էր, անունը Եփրատ: Սա ուղղակիորեն բերում է այն եզրահանգմանը, որ երկու երկրները պետք է սահմանակցեին մի այնպիսի հատվածում, որտեղ Եփրատ գետի հոսանքը նավարկելի էր: Իսկ Մելիտինի մոտ

¹ Տես Հերոդոտոս, III, 91:

² ՍՈՊ, I, 72:

³ Տես Մանանդյան Հ., Քննական տեսություն..., էջ 63-64:

գետը նավարկելի չէ, քանի որ այստեղ բազմաթիվ սահանքներ են և ջրվեժներ: Բացի այդ, եթե Կիլիկյան սատրապության սահմանը հյուսիս-արևելքում հասներ այդքան հեռու, որի համար չկա և ոչ մի հիմք, ապա հին Հայաստանի կարևոր երկրամասերից մեկը՝ Կոմագենեն, կհայտնվեր Կիլիկիայի կազմում և իրերի նման վիճակը տրամաբանորեն լիովին անհարիր կլիներ մ. թ. ա. III դարի պատմական իրականությանը: Հակառակ դեպքում, պետք է անտեսել այն կարևորագույն փաստը, որ մ. թ. ա. III դարում Ծովքը ու Կոմագենեն կազմում են առանձին պատույթներ: Իսկ ենթադրել, թե Ծովքը Կոմագենեն գրավել է Կիլիկիայից, որը տվյալ դեպքում կնշանակի Մելիկյաններից, պարզապես անհնարին է:

Քննության ընթացքում ցույց ենք տվել, որ «Արքայական ճանապարհը» Հայաստանում երբեք չի հատել Տիգրիսը, իսկ Մելիտինով անցնելու դեպքում ճանապարհն անպայմանորեն կհատեր Տիգրիսը, որը, սակայն հնարավոր չէր, քանի որ Տիգրիսի գետանցումը, ըստ սկզբնաղբյուրի, կատարվել է միայն Մատինե երկրում:

Սկզբնաղբյուրների համեմատական-համադրական վերլուծությունը բերում է այն եզրահանգմանը, որ Պակտյուիկե երկիրը տեղադրվում է Կեսարիա-Մաժակի և հարակից շրջաններում, սակայն մ. թ. ա. V դարի կեսերին Հայաստանի սատրապությունը կորցրել էր Պակտյուիկեն, որն անցել էր Կապադովկիային, որոնց բնակչությունն էթնիկապես մոտ էր միջյանց: Սկզբնաղբյուրների հավաստմամբ, մուշք-փոյուզիացիների մի խումբը հաստատվել էր Կեսարիա-Մաժակի շրջանում¹:

Կատպատուկա անունը, թերևս, առաջացել է հենց պարսկական տիրապետության ժամանակ, երբ ձևավորվում է III սատրապությունը և սերտորեն անցվում է Պատուկա երկրանվան հետ: Կամ էլ մ. թ. ա. VI դարի սկզբին Պատուկա երկրի անունն արևելքից արևմուտք շարժվող մարտերը պետք է տարածեին Հալիսի ոլորանի շրջանում ընկած հողերի վրա և արդյունքում Պատուկա-Պակտյուիկե երկրի անունն ավելի ուշ հիմնավորապես դառնում է այլ երկրի անունը՝ Կատպատուկա-Կապադովկիա: Կատպատուկա-Կապադովկիայի մեջ «կատ»-ը նշանակել է ստորին կամ ներքին, իսկ ամբողջ անունը՝ Ստորին կամ Ներքին Պատուկա, ապա Պատուկա-Պակտյուիկեի համեմատությամբ՝ նրանից այն կողմ ընկած տարածքները հենց այդպես էլ կարող էին ընկալվել և յուրացվել նվաճող մարտերի կողմից:

Ինչևէ, ավելի ուշ Պոնտոս անունը դուրս է մղում Կապադովկիա անունը հյուսիսային շրջաններում և Կապադովկիա պատմական անունը ժամանակի ընթացքում տարածվում է Պատուկայի վրա: Մուշք-փոյուզների մի խմբի հաստատվելով էլ Կեսարիա-Մաժակի շրջանում, այլ բացառություն է ստանում նաև Հերոդոտոսի հայերին փոյուզիական վերաբնակիչներ համարելու տեղեկությունը, քանի որ Կեսարիա-Մաժակի շրջանում հաստատված մուշքերին, որոնք երկար ժամանակ գտնվել են Հայաստանի քաղաքական տիրապետության ներքո՝ ծայր արևմուտքում, և դարձել հայրց թագավորի հպատակները, որոնց ըստ Պատմա-հայր հորենացու, Արամ Նահապետը ստիպել էր սովորել հայերեն, հունական աշխարհի իրոք կարող էր համարել փոյուզիական վերաբնակիչներ, որոնց հետ էին նախ և առաջ շփվել հույները Հայաստանում: Հետևաբար, Հերոդոտոսի արմենները հենց այս հայահպատակ մուշքերն են: Անտարակույս է, որ Արտոքմենը

¹ Տես Հովսեփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, էջ 55-56, Կոստանդին Ծիրանածին, Բանակաթների մասին, էջ 168, Известия древних писателей...-«Вестник древней истории», 1948, № 3, էջ 237, 293, Strabo, XII, II, 7, 8, 9.

ոչ թե ընդհանրապես փոյուզների, այլ Կեսարիա-Մաժակի շրջանում հաստատված մուշք-փոյուզների և հայերի հրամանատարն էր, և Պատմահոր ժամանակ խոսքը տուկ պատմական հիշողության մասին էր: Կասկածից վեր է, որ Պատուկա-Պակտյուիկեն, որ տեղադրվում է Կեսարիա-Մաժակի և հարակից շրջաններում և Յերոզոտոսի մոտ հիշատակված է որպես Կիլիկիա, հենց նույն Կիլիկիա անունով էլ հանդես է գալիս Ստրաբոնի կամ Պտղոմեոսի մոտ որպես Կապադոկիայի ստրատեգիաներից կամ պոնտեկտուրաներից մեկը¹, ծնունդ էր առնում հին ժամանակներից: Սակայն Պակտյուիկեն որպես երկիր ավելի մեծ էր, քան Կիլիկիա վարչական միավորը:

Մեր քննությունը ցույց է տալիս, որ պարսից «Արքայական ճանապարհը» Կապադոկիայի մի որոշակի հատվածում (ինձա՛ Պատուկա-Պակտյուիկե) ունեցել է հետևյալ երթուղին. Կեսարիա-Ոսկե Կոմանա-Կոկիսոն մինչև Մարաշ: Վերջինս արդեն Կիլիկիայի սատրապության մեջ էր մտնում, որտեղից, նկատի ունենալով ճանապարհի տվյալ հատվածի շուրջ 90 կմ երկարությունը, պետք է Կիլիկիայի և Յայաստանի շփման կետը համարել նշանավոր գետանցը Ջևզան, որտեղ արդեն Եփրատը նավարկելի է: Յամաժայն Յերոզոտոսի, «Արքայական ճանապարհը» Յայաստանից մտնում էր Մատիենե², որի տակ պետք է հասկանալ Ասորեստանը: Ուսումնասիրողների կարծիքով, Յայաստանը և Մատիենեն սահմանակցել են Վանա լճից հարավ³, Ջեզիրե-Իբն-Օմարի մոտ⁴: Սակայն ճանապարհը Յայաստանից պետք է նախ մտներ Ասորեստան, ապա նոր Մատիենեն (տես ստորև): Մեր կարծիքով, Յայաստանը և Մատիենեն (ինձա՛ Ասորեստանը) սահմանակցում էին մի այնպիսի շրջանում, որտեղից Տիգրիսը և Ուրմիա լիճը հետո հաջորդաբար նշված Մեծ ու Փոքր Ջաբերը և Գյունդեսը կարելի էր նավով անցնել: Յերոզոտոսը նշում է չորս նավարկելի գետերի մասին, որը ցույց է տալիս ինչպես այդ գետերի ընդհանրապես նավարկելի լինելը, այնպես էլ այն չորս գետանցները, որոնցով հաջորդաբար պետք է շարունակվեր ճանապարհը: Կարևոր է նշել, որ Յայաստանից Ասորեստան մտնելու համար Յերոզոտոսը չի նշում Տիգրիսի գետանցման մասին, ինչը ցույց է տալիս, որ Ասորեստանը տարածվել է Տիգրիսի երկու և աջ, և՛ ձախ ափերին: Մեր կարծիքով, «Արքայական ճանապարհի» Ասորեստանով անցնող հատվածը պետք է ձգվեր Տիգրիսի և Արևելյան Խաբուրի միախառնման վայրից հարավ տարածվող շրջանից, որտեղից Տիգրիսը, ապա նաև Մեծ ու Փոքր Ջաբերը և Գյունդեսը հարմար են և նավարկման, և գետանց-ման համար: Նման երթուղու սահմանագծման դեպքում, Տիգրիսից (Արևելյան Խաբուրի հետ միախառնման շրջանից) արևմուտք ընկած հողերը սկսած Միզոպոտամիա-Սօբիմից, պետք է տեսնել Յայաստանի կազմում, քանի որ «Արքայական ճանապարհը» բուն Յայաստանում Տիգրիսը չի հատել:

Դատելով Բեհիստունի արձանագրության տվյալներից, Ասորեստանի հյուսիսային որոշ շրջաններ մտել են Յայաստանի մեջ: Այսպես, հայ ապստամբները ճակատամարտերից մեկը պարսիկների դեմ տալիս են Ասորեստանի Իզալա վայրում⁵: Սակայն դա չի նշանակում, որ այն Ասորեստանի մեջ է եղել: Իրականում

Իզալան քաղաքական առումով գտնվել է Յայաստանի մեջ, քանի որ արձանագրության արքայներն տարբերակում Իզալան ուղղակիորեն հիշատակվում է Ուրաշտուի (ինձա՛ Յայաստանի) կազմում առանց Ասորեստանի հետ կապելու¹: Իզալայի տեղադրության վերաբերյալ կան տարբեր առաջարկություններ², սակայն անկախ այն հանգամանքից, թե Իզալան Միջագետքի հյուսիս-արևմտյան որ մասում կտեղադրվի, հաստատ է, որ «Արքայական ճանապարհը» կարող էր անցնել Միջագետքի Յայաստանին անցած այն հատվածով, որն ուներ միակ հարմար երթուղին (տես ստորև) այդ շրջանում և, բացի այդ, ճանապարհի երկարությունը (56^{1/2} փարսախ = շուրջ 350 կմ) միայն այդ գծով կարող էր անցնել:

Յենվելով «Գեղդի ժամանակագրության» վրա, կարելի է ցույց տալ, որ Յայաստանը դեռևս մ. թ. ա. VII դարի վերջերից հարավային ուղղությամբ ծավալվել էր: «Ժամանակագրության» մեջ մ. թ. ա. 609-608 թվականների դեպքերի կապակցությամբ հիշատակվող Բիթ-Խանունիան³, մեր կարծիքով, թերևս, նույնանուն է Սարգոն Բ-ին ուղղված նամակներից մեկում նշված Ուրարտուի Կանիուն գավառին⁴, որն աշխարհագրորեն համապատասխանում է Կորդուքին: Ինչպես ցույց է տալիս Մովսես Խորենացին, Կորդուքը մտել է Յայաստանի մեջ, քանի որ Արամը շարժվել է դեպի Ասորեստանի դաշտը Կորդուքի միջով, այսինքն Կորդուքն արդեն Յայաստանի մեջ է⁵: Պատահական չէ նաև, որ, ըստ Մովսես Խորենացու, Արամը Ասորեստանի կողմերը հանձնում է Կաղմոսի տան հաջորդներին⁶, այսինքն Բիթ-Խանունիան հավանաբար աշխարհագրորեն Կաղմես տունն է:

Նաբուպասարի արշավանքը Իզալա և Բիթ-Խանունիա կրել է ավարառուական բնույթ և այդ շրջանները շարունակել են մնալ Յայաստանի մեջ: Ասորեստանի կործանումից հետո Միջագետքի հյուսիս-արևմտյան շրջանները շարունակում են գտնվել Յայաստանի մեջ, ինչը և պահպանվում է Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում: Յավանաբար, այս ժամանակներից է, որ հայերն ակտիվորեն ներթափանցում են Յուսիսային Միջագետք և Ստրաբոնի հաղորդմամբ, հասնում են մինչև Կալաբենե և Ադիաբենե կազմելով Ադիաբենե երկրի ամենաշատ ցեղերից մեկը⁷: Թովմա Արծրունու տեղեկությունից ևս պարզվում է, որ Կյուրոս Մեծից Արծրունիների նախահայրերից Քսերքսեսն ու յուրայինները նվեր են տառնում Տմորիքն ու Լինվեի գետեզերքը կամ Լինվեի կողմերը⁸, այն է Ասորեստանի կողմերը, այսինքն Տիգրիսի Արևելյան Խաբուրի հետ միախառնվելու շրջանը: Ուշագրավ է, որ Փավստոս Բուզանդի հաղորդման համաձայն, Պապ թագավորը Վաղես կայսրից պահանջում է Կեսարիան, Ուռհան և ևս տասը քաղաքներ, որն ամենայն հավանականությամբ տեղի չի ունեցել, սակայն կարևորն այն է, որ հայ ժողովրդի պատմական հիշողությունը նշված քաղաքներն իրենց շրջակա տարածքներով համարել է հայկական երկիր, իսկ Կեսարիան ու Ուռհան կարող էին գրավված լինել մ. թ. ա. VII դարի վերջին երես-

¹ Стрaboн, XII, I, 4, XII, II, 7, Claudii Ptolemaei Geographia, voluminis primi, pars secunda, VI, 14.

² Տես Յերոզոտոս, V, 52:

³ Տես Սարգսյան Գ., Ուրարտական տերությունը և հայերը, էջ 68, Պատմահայր Յերոզոտոսը, Յերոզոտոս, էջ 573:

⁴ Տես Մավաշյան Կ., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.-XV в. н. э.), -Труды, т. VI, Ереван, 1985, с. 15.

⁵ Տես Kent R., նշվ. աշխ., էջ 124:

¹ Տես Malbran-Labat F., նշվ. աշխ., էջ 98, 114:

² Տես Арутюнян Н., Топонимика Урарту, Ереван, 1985, с. 86, АВИИУ, 23, прим. 30, Меликшвили Г., Навра-Урарту, էջ 51, Ադոնց Ե., Յայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 69:

³ Տես Дьяконов И., Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей, «Вестник древней истории», 1981, рիվ 2, էջ 38-39:

⁴ Տես АВИИУ, 50 (4).

⁵ Տես Մովսես Խորենացի, էջ 45:

⁶ Անդ, էջ 46:

⁷ Տես Strabo, XVI, I, 19.

⁸ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 63, 67:

նամայակում¹ և նման կացությամբ մտնել Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ: Չերոդոտոսի տեղեկության քննությունից նույնպես կարելի է եզրակացնել, որ Ասորեստանի մի մասը մտել է ըստ երևույթին, Հայաստանի մեջ: Ըստ նրա՝ Բաբելոնը և մնացյալ Ասորեստանը կազմել են IX մահանգը²: «Մնացյալ Ասորեստանը» ուղղակիորեն հուշում է այն միտքը, որ Ասորեստանն իրոք գրկվել էր իր որոշ շրջաններից, որոնք այլ աղբյուրների հավաստմամբ մտել էին Հայաստանի մեջ և Մովսես Խորենացու մոտ այդ տարածքները կոչվել են Ասորեստանի դաշտ:

Արիանոսի³, Պլուտարքոսի⁴, Դիոդորոս Սիկիլիացու⁵, Մովսես Խորենացու⁶, Սեբեոսի⁷ տեղեկությունների համեմատական-համադրական վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ Հայաստանի հարավային սահմանը հասել է մինչև Դասն լեռները և Կոնի-Նի-հորական լեռների հարավային փեշերը:

Բեհիստունի արձանագրության մեջ հիշատակվող հայաստանյան մյուս տեղավայրերի (Չուգահյա, Տիգրա, Ուխյամա, Աուտիյարա) տեղադրության քննությունը ցույց է տալիս, որ այդ վայրերը, ամենայն հավանականությամբ, գտնվել են Սատրապական Հայաստանի հարավային շրջաններում:

Ըստ այդմ էլ, պարսից «Արքայական ճանապարհը» Հայաստանում ունեցել է հետևյալ հավանական երթուղին՝ Եփրատ-Ուռհա-Վերանշեիր-Մարդին-Սծբին, որից արևելք սկսվում էր Ասորեստանը:

Մ. թ. ա. V դարի վերջին, երբ հունական տասնազարանոց զորաբանակը նահանջում էր Միջագետքից, Սատրապական Հայաստանում առկա էին վարչական հետևյալ փոփոխությունները: Հարավում անկախացել էին կարդուխները, որոնց երկրի Կորդուքի, արևմտյան մասով անցնում են հույները: Կարդուխներն (=կարդուք-Խ.Յ.), ամենայն հավանականությամբ, հայկական ցեղ էին, և նրանց ու հայերի սահմանը Կենտրիտես գետն էր՝ ներկայիս Բոհտան-սուն: Հելլենները Կենտրիտեսն անցնում են Բաղեշի հետ միախառնվելու շրջանից քիչ հարավ և, այնուհետև, Բաղեշ գետի հոսանքով ընթանում դեպի հյուսիս՝ Բաղեշի ակունքներն ընդունելով որպես Տիգրիսի ակունքներ: Անցնելով «Տիգրիսի ակունքը» նրանք հասնում են Տելեբոաս գետին, որը նույնանուն է Լիզ կամ Կորի ձոր (Ռուլանդը, այժմ Զյոեսուն) գետերից որևէ մեկի հետ:

Արևմտյան Հայաստան հյուպարքիան ընդգրկել է Արածանիի հոսանքի շրջանները, Բասեանը, Տայքը, Սայերը: Արևմտյան ուղղությամբ Արևմտյան Հայաստանի սահմանների մասին Քսենոփոնը տեղեկություններ չի հաղորդում: Ելնելով Արևմտյան Հայաստանի հիշատակումից, կարելի է ենթադրել նաև Արևելյան Հայաստան հյուպարքիայի գոյությունը, որի հյուպարքոսը թերևս Արտուխասն էր:

Հույներն անցնում են հետագա Բագրևանդ, Ծաղկոտն գավառները և Երասխի վերին հոսանքի շրջանում դուրս գալիս փասիանների, այնուհետև տաոխների երկրները և մտնում խալկոսների երկիրը, որն Հայաստանի մեջ չէր: Դատելով Քսենոփոնի տեղեկություններից, փասիանների, տաոխների, հեսպերիտների երկրներն ընկալված են որպես Հայաստան, քանի որ խալկոսներն ուղղակիորեն

համարված են Հայաստանի հարևանները: Խալկոսների երկրից՝ Կղարջքից, դուրս գալուց հետո, հույները կրկին մտել են Հայաստան և այդ մասին չեն իմացել ու ճորտի ծախսափնյակով շարժվելով հասնում են մակրոնների երկիրը՝ դուրս գալով Հայաստանից:

Սատրապական Հայաստանի արևելյան, հարավ-արևելյան և հյուսիսային սահմանների ճշգրտման համար կարևոր նշանակություն ունեն ինչպես անտիկ, այնպես էլ հայկական սկզբնաղբյուրները և, ընդհանրապես, վաղյան ժամանակաշրջանի արձանագրական նյութի քննությունը: Չետադարձ քննությամբ հատկապես արժեքավոր են Ստրաբոնի տեղեկությունները հարևան երկրներից Արտաշես Ա-ի կողմից կատարված նվաճումների (հիմնականում վերամիավորման) մասին: Մարերից Կասպիանեի (Փայտակարան), Փավնիտիսի (Մարդպետական) նվաճումը ցույց է տալիս, որ Սատրապական Հայաստանի հարավային սահմանը դեռևս Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում հանդիսացել է Երասխը: Ստրաբոնի¹, Պլինիոս Ավագի², Մովսես Խորենացու³, հայկական «Աշխարհացոյց»-ի⁴, Թովմա Արծրունու⁵ տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Կուրի և Երասխի միջագետքը անհիշելի ժամանակներից գտնվել է Հայաստանի մեջ:

Ուշադրություն ենք դարձրել այն հանգամանքի վրա, որ Արիանոսի մոտ աղվանների հետ հիշատակվող սակեսինները⁶ ոչ մի կապ չունեն Սակասենե-Շակաշենի հետ և տեղորոշվում են Կուրի ծախսափնյակում, որտեղ կար սկյութական հոծ զաղթականություն և համապատասխանում են XVIII սատրապության սասպեյրներին: Սա նշանակում է, որ մ. թ. ա. 331 թվականին XVIII սատրապության տարածքը շարունակում էր մնալ Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ: Օրինակ, սակ-սկյութների մի մասն էլ սակասանները ըստ Պլինիոս Ավագի⁷, հաստատվել էին Ասեաց փոքր գավառում⁸ և ոչ մի կապ չունեն Շակաշենի հետ: Սակ-սկյութները հաստատվել էին և Ասեաց փոքր գավառում, և Շակաշենում, և Կուրի ծախսափնյակում: Միաժամանակ այն կարևոր հանգամանքը, որ Ստրաբոնը չի նշում աղվաններից հողեր գրավելու մասին, նշանակում է, որ Կուր գետը հանդիսանում էր Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանը: Հարկավ, կարելի է նաև տեսնել, որ մ. թ. ա. III դարում Հայաստանը կորցրել էր Պարսկահայքը Բասորդպեդան, որն անցել էր հզորացած Ատրպատականին: Այս մասին կարելի է եզրակացնել նաև Թովմա Արծրունու տեղեկությունից⁹, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի թագավորության սահմանը Պարսկահայքի շրջանում անցել է Անձախիձոր գավառի արևելակողմով, այսինքն Չեր և Չարավանդ գավառները գտնվում էին հայոց պետության կազմից դուրս:

¹ Տես Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 70:

² Տես Չերոդոտոս, III, 92:

³ Տես Արիանոս, էջ 96, 107:

⁴ Տես Плутарх, Александр, XXXI, - Избранные жизнеописания, т. II.

⁵ Տես Դիոդորոս Սիկիլիացի, էջ 97:

⁶ Տես Մովսես Խորենացի, էջ 44:

⁷ Տես Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 53, 78:

¹ Տես Ստրաբոն, էջ 37, 55, Strabo, XI, XIV, 4.

² Տես Plinii Secundi C., Naturalis historiae, VI, 42, XII, 28.

³ Տես Մովսես Խորենացի, էջ 112, 169-170:

⁴ Տես «Աշխարհացոյց Մովսես Խորենացույ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 33:

⁵ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 63:

⁶ Տես Արիանոս, էջ 97, 101:

⁷ Տես Plinii Secundi C., Naturalis historiae, VI, 11, 29.

⁸ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգ, ... էջ 98-99:

⁹ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 82, 84:

Ուսումնասիրությունները (Չ. Կարազյոզյանի¹, Բ. Հարությունյանի², Ս. Պետրոսյանի³, Ա. Պետրոսյանի⁴ և այլոց) ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան եզրական շրջանների բնակչությունը եղել է հնդեվրոպական-հայկական:

Ըստ Ստրաբոնի, Արտաշես Ա-ն իբերներից գրավում է Պարիադրեսի ստորոտի գավառները, Խործենեն, Գոգարենեն⁵: Գոգարենների դեպքում խոսքը վերաբերում է վերամիավորման մասին, քանի որ հզորացած վրացիները Փառնավազ Ա-ի օրոք (մ. թ. ա. III դարի 70-ական թվականներ) գրավել էին այն:

Սեր քննության արդյունքները ցույց են տալիս, որ բացի արևմտյան Գոգարքից, Մարդպետականից և Փայտակարանից, Արտաշես Ա-ն Ջարեհը վերամիավորել են հայկական հողերը, որոնք Աբենենյան տիրապետության ժամանակաշրջանում մտնում էին Սատրապական Հայաստանի մեջ:

XIII սատրապությունն արևմուտքում տարածվել է մինչև Կեսարիա-Պակտյուիկես և այստեղից հյուսիս՝ Թերմոզոնտ գետի և Յասոնի իրվանդանի միջև ընկած տարածքում դուրս եկել Սև ծով, իսկ Կեսարիայից հարավ սահմանը ձգվել է «Արքայական ճանապարհի» Ոսկե Կոմանա-Կոկիսոն-Մարաշ գծով (վերջինս արդեն Կիլիկիայի մեջ): Հարավային սահմանագիծն անցել է Ջազմայից արևելք, Եփրատի արևելյան ափից և շարունակվել Ուռհա (ներկայումս՝ Ուրֆա)-Վերանշեհր-Մարդին-Մծբին (ներկայումս՝ Նուսայբին) գծով: Մծբինից արևելք սկսվում էր Ասորեստանը: Այնուհետև հարավային սահմանագիծը պետք է անցներ Արևելյան Խաբուրի և Տիգրիսի միախառնման շրջանից և այստեղից Դասն լեռներով հասներ մինչև Կոհ-ի-Նիհորական լեռների հարավային մասերը և Արասի գետով մինչև Ուրմիո լիճը: Ուրմիո լճից հյուսիս՝ Կարմիր (Կոտոր) գետով մինչև Արաքսի հետ միախառնվելու շրջանը, մտել է Հայաստանի մեջ: Երկու գետերի ջրկիցից արևելք Երասի գետի հոսանքով մինչև Կուր գետի հետ միախառնվելու շրջանը, կազմել է XIII և X սատրապությունների սահմանը: XIII և XVIII սատրապությունների սահմանը կազմել են Կուր գետը և Թեղեղի լեռնաշղթան: Կուր գետի վերին հոսանքի սկսած ոլորանից, և ճորոխի ստորին հոսանքի միջև ընկած Կղարքը խալյուր-մոսքերի երկիրը, մտնում էր XIX սատրապության մեջ: Այնուհետև XIII և XIX սատրապությունների սահմանն անցնում էր Պոնտական լեռնաշղթայով, XIII սատրապությանը թողնելով Սև ծովի հարավային ափամերձ շրջանի որոշակի հատվածը: Մ. թ. ա. V դարի կեսերին պարսից արքունիքը մեզ անհայտ ինչ-ինչ պատճառներով Պակտյուիկես, Սև ծովի առափնյա շրջանը հանում է Հայաստանի սատրապության կազմից միացնելով Կապադովկիային:

¹ Տես Карацзян О., Проблема этногенеза и самоназвания армянского народа во кливонисским источникам. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, թիվ 7, էջ 57-76:

² Տես Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը. «Պատմա-բանասիրական հանդես», 1994, թիվ 1-2, էջ 265. Книга отечествует научная добросовестность. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 7, էջ 51:

³ Տես Պետրոսյան Ա., Սարգուրի II-ի անդրևանդան արշավանքի երթուղու շուրջ. «Պատմա-բանասիրական հանդես», 1984, թիվ 2, էջ 175-184, Սերժանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI-V դդ.). «Պատմա-բանասիրական հանդես», 1976, թիվ 1, էջ 187-198:

⁴ Տես Петросян А., Самоназвание армян и вопрос локализации поселившейся протоармянского языка. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թիվ 5, էջ 120-129. Отражение иппократовского корня *uel- в армянской мифологии. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 1, էջ 56-70:

⁵ Տես Ստրաբոն, էջ 57:

Երկրորդ գլուխը կրում է «ԱԲԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XVIII ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ և ՍԱՀՄԱՆՆԵՐԸ» խորագիրը: XVIII մահանգի մեջ մտել են մատիենները, սասպերները և ալարոդները¹: Բնությունից պարզվում է, որ մատիենների վերաբերյալ սկզբնաղբյուրները տալիս են տարբեր տեղադրություններ: Հերոդոտոսի մի տեղեկությունից պարզվում է, որ Հալիսը հոսել է աջից՝ մատիենների և ձախից՝ փոյուզիացիների միջով², իսկ համաձայն մյուս տեղեկության՝ մատիենները մտել են III սատրապության մեջ³: Փաստորեն, մատիենների մի հատվածը բնակվել է Փոքր Ասիայում, Հալիսի ոլորանի շրջանում, արևմուտքում Հալիսի ձախ ափին, սահմանակցելով փոյուզիացիներին: Այս մատիենները չէին կարող մտնել XVIII սատրապության մեջ, քանի որ այդ դեպքում XIII սատրապությունը չէր կարող դուրս գալ Սև ծով:

Հերոդոտոսի հաջորդ տեղեկությունները մատիեններին կապում են բոլորովին այլ աշխարհագրական միջավայրի հետ: Ըստ պատմիչի, արծեններին հաջորդում են մատիենները⁴, որոնք կարծես թե աշխարհագրորեն նույնանում են Ասորեստանին: Սակայն Ուրմիո լճից հարավ տեղորոշվող Մատիեն երկիրը, որտեղ իրենց ակունքներն են ունեցել Փոքր Ջաբը և Գյունդեսը, չի կարող նույնանալ Ասորեստանին, քանի որ Հերոդոտոսը հստակ տեղեկություններ է հաղորդում Ասորեստանի վերաբերյալ: Այսպես, Ասորեստանը ասորեստանցիներով բնակեցված երկիր է, Հայաստանին հարևան և Ասորեստանի մի մասը Բաբելոնի հետ միասին կազմել են IX սատրապությունը, ու միաժամանակ Նինոսը (ինս՝ Նինվա) համարվել է Ասորեստանի քաղաքը: Այս տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Մատիենեն և Ասորեստանը չեն կարող նույնանալ ոչ աշխարհագրական, և ոչ էլ վարչական առումներով: Հետևաբար, անհրաժեշտ է ընդունել, որ արծեններին հաջորդել են ասորեստանցիները և պարսից «Արքայական ճանապարհը» Հայաստանից մտնում էր Ասորեստան և հետո միայն Մատիեն:

Հերոդոտոսի հաջորդումներից մեկի համաձայն⁵, Մատիենական լեռները նույնանում են Ջագրոշի լեռներին, որտեղից բխել է Գյունդես գետը, ներկայիս Դիալան՝ Տիգրիսի ձախափնյա վտակը: Հերոդոտոսը մատիենների երկրում է դնում նաև Արաքսի ակունքները, որի բերաններից մեկը բաց տեղանքով հոսում էր դեպի Կասպից ծով⁶: Այս տեղեկության Արաքսը փորձել են նույնացնել հայկական Երասի-Արաքսին և վերջինիս վերին ու միջին հոսանքների շրջանում փնտրել են մատիեններին: Սակայն նկատի ունենալով, որ Արաքսը և Գյունդեսը բխել են մատիենների երկրից և Արաքսը թափվել է Կասպից ծովը, ապա Արաքսն այս դեպքում համապատասխանում է Ամարոս, ներկայիս Սեֆիր-ռուզ գետին, որի ակունքները գտնվում են Ջագրոշի (ինս՝ Մատիենական) լեռների արևելյան լանջերին: Անդրադառնալով այս տեղեկությանը, Ստրաբոնն անհավանական է համարում հայկական Արաքսի և Հերոդոտոսի Արաքսի նույնացումը⁸: Անկասկած, Ստրաբոնն իրավացի է այս հարցում, քանի որ Հերոդոտոսի սույն տեղեկության մեջ Արաքսը պատմական Օբսոսն է, ներկայիս Ամու-Ղարյան, ընդ որում հենց

¹ Տես Геродот, III, 94.

² Անդ, I, 72:

³ Տես Հերոդոտոս, VII, 72:

⁴ Անդ, V, 49, V, 52:

⁵ Անդ, II, 17, I, 194, III, 92, II, 150:

⁶ Անդ, I, 189:

⁷ Անդ, I, 202:

⁸ Տես Strabo, XI, XIV, 13.

պատմիչն է Արաքսը համեմատում Իստրոսի (իմա՝ Դանուբ գետը) հետ և մասսագետներին տեղադրում Արաքսից այն կողմ, իսսեդոններին հանդիպակաց¹:

Յերոզոտոսի տեղեկությունները ցույց են տալիս, որ Մատիենն անունով երկիրը գտնվել է Ուրմիո լճից հարավ ընկած շրջանում, որտեղից սկիզբ էին առնում Փոքր Ջաբը, Գյունդեսը և Սեֆիդ-ռուդը:

Ստրաբոնի մոտ Մատիենն մի դեպքում տեղադրվում է Հալիսի ոլորանի շրջանում, երկրորդ դեպքում համարվում է Մարաստանի երկրամաս²: Որպես Մարաստանի երկրամաս, Մատիենն համապատասխանում է Յերոզոտոսի Մատիենն երկրին, որը գտնվում էր Ուրմիո լճից հարավ: Ընդ որում, Ստրաբոնի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Հայաստանը և Մատիենն պետք է սահմանակից լինեին և սահմանակցությունը կարող էր լինել Ուրմիո լճի հարավ-արևմտյան ափի շրջանում: Ստրաբոնը Մանտիանեն համարում է Հայաստանի մեծ լճերից մեկը, որն, ըստ հեղինակի, թարգմանաբար նշանակում է «կապույտ» և հավանական է, որ «կապույտի» գաղափարը թերևս գալիս էր հենց մատիեն կամ մատիան ցեղանունից³:

Պտղոմեոսի՝ աշխարհագրության տեսանկյունից բավականաչափ խառնաշփոթ մի տեղեկության⁴ քննությունից կարելի է տեսնել, որ հեղինակի Մարտիանեն համապատասխանում է Յերոզոտոսի Մատիենն երկրին՝ տեղադրվելով Ուրմիո լճից հարավ: Ստրաբոնի⁵, Պուլիբիոսի⁶, Պլինիոս Ավագի⁷ տեղեկությունները՝ կադուսիների և մատիենների հարևաններ լինելու մասին, ցույց են տալիս, որ Ուրմիո լճի անունը Մարտիանեն-Մանտիանեն (և՛ «ր»-ն, և՛ «մ»-ն անական են), հետագայում տարածվել է արևելյան և հարավային ափամերձ շրջանների բնակչության վրա, որոնք էլ կոչվել են մատիեններ, սակայն այս իրողությունն ավելի ուշ ժամանակներին է վերաբերում: Կարևոր է նկատի ունենալ, որ Յերոզոտոսն Ուրմիո լճի ավազանում գրեթե մատիեններին չի հիշատակում և խոսում է միայն Մատիենն երկրի մասին: Այս իրողությունը ցույց է տալիս, որ մատիեններն այլևս գոյություն չունեին և իրենց անունը տվել էին երկրին: Ինչպես Սև ծովի ափամերձ բնակչությունը կոչվում էր պոնտացիներ, այնպես էլ Մանտիանեն լճի հարավային և արևելյան ափամերձ բնակչությունը երբեմն կարող էր ուշ ժամանակներում կոչվել մատիեններ: Մատիենն երկրի բնակչությունը կարող էր կոչվել մատիեններ անունով, բայց միայն այն պարագայում, եթե նրանք տեղորոշվում են Ուրմիո լճից հարավ ընկած Մատիենն երկրում⁸:

Ոչ հայրազան մատիենները, ոչ էլ Ուրմիո լճի մերձակայքում գտնվող Մատիենն երկիրը չէին կարող մտնել XVIII սատրապության մեջ: Եթե առաջինը պարզապես անհնար է, ապա երկրորդի դեպքում հաշվի առնելով սասպեյրների Սպերի շրջանում մինչ այսօր ընդունված տեղադրությունը, դժվար թե Սպերից մինչև Ուրմիո լճի շրջանն ընկած տարածքում այլ ցեղեր չգտնվեին և ալարոդները, որոնք պետք է զբաղեցնեին այդ տարածքը, անհետանում են տարածաշրջանի էթնիկական քարտեզից:

¹ Տե՛ս Յերոզոտոս, I, 201:

² Տե՛ս Ստրաբոն, էջ 11, 13, 35: Տե՛ս նաև Страбон, XI, XIII, 2, XI, XIII, 7.

³ Տե՛ս Հարությունյան Բ., Արեմեյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 61:

⁴ Տե՛ս Claudii Ptolemaei Geographia, VI, 2, 5.

⁵ Տե՛ս Страбон, XI, VIII, 8.

⁶ Տե՛ս Известия древних писателей..., -«Вестник древней истории», 1947, րիվ 3, էջ 301:

⁷ Անդ, -«Вестник древней истории», 1949, րիվ 2, էջ 304-305:

⁸ Տե՛ս Յերոզոտոս, V, 49:

Սակայն մի շատ կարևոր տեղեկություն, մատիեններին կապում է աշխարհագրական բոլորովին այլ միջավայրի հետ: Յեկատեոս Միլետացին, որը զիտի նաև հայրազանի մատիենների մասին, ունի մի տեղեկություն, թե մոսքերը մատիեններին հարևան կոլխական ցեղ են¹: Մատիենների այս խումբը տեղորոշվում է Այսրկովկասում, ներկայիս Վրաստանի Յանրայետության հարավ-արևմտյան շրջաններում հաստատված մոսխերի կամ մոսքերի հարևանությամբ, նրանցից էլ իրենք²: Մատիեններն, ըստ երևույթին, պատկանել են սկյութական աշխարհին և Այսրկովկասում նրանց գոյությունը ցույց է տալիս, որ այս ցեղախումբն իր շարժումը սկսել էր Կովկասից:

Յերոզոտոսի հաղորդումներից երևում է, որ սասպեյրները եղել են էթնիկական խոշոր միավորում, որը հանդես է գալիս որպես ազգակից ցեղերի հավաքական անբողջություն, հյուսիսում անմիջականորեն սահմանակցելով կոլխերին, իսկ հարավ-արևելքում՝ մեդացիներին: Սասպեյրները զբաղեցրել են Արևելյան Վրաստանի տարածքն ու նաև հետագա Աղվանքը կամ Կուրի ծախափնյակի շրջանը: Այս ենթադրությունը հաստատում են հին աղբյուրները, որոնց հիմքում, ի մասնավորի, ընկած են Ապոլլոնիոս Յոզոտոսու տեղեկությունները³: Այդ տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ սասպեյրները գտնվել են կոլխերից արևելք, Արևելյան Վրաստանի տարածքում: Սասպեյրները սկյութական ժողովուրդ են կամ ցեղախումբ, որի անունը ծագում է սկյութա-ալանական աշխարհին պատկանող «աս» ցեղախմբի անվանումից, որ մի մասն անհայտ պատճառներով կրել է սասպեյր անունը⁴: «Աս» ցեղի մի հատվածը հաստատվում է Ասեաց փոքր կամ Արսեաց փոքր գավառում, իսկ Սպերը պահպանել է սասպեյր ցեղանունը: Ասպեյրներ էին նաև սասպեյրները, որոնք հերոդոտյան ժամանակներում հեռացել էին իրենց սպեյրյան ազգակիցներից և հաստատվելով Վիրքում՝ բռնել էին աստիճանական վրացականացման ուղին, երբ արդեն վրացերենին հատուկ սկզբունքով սասպեյրների հավաքականությունը ստանում էր սասպեյր կամ սասպեյր տեսք⁵: Սասպեյր անվանումից ծագել է իբերների անունը, սակայն այն տարբերությամբ, որ սասպեյրները բնակվել են միայն Արևելյան Վրաստանի տարածքում և այդ միավորումը զլխավորել են հնդեվրոպական ցեղերը, բայց այդ միավորման մեջ մտած ցեղերը եղել են հիմնականում քարթական⁶: Անհրաժեշտ է նշել, որ «Անաբասիս»-ում հիշատակվող հեսպերիտները⁷ ոչ մի դեպքում չեն կարող նույնանալ սասպեյրների հետ, քանի որ տեղադրվում են Սպերի շրջանում և սասպեյրների անունն այդպես է արտացոլվել և իմաստավորվել հույների մոտ: Փաստորեն, սասպեյր անունը հավաքական անվանում էր և այդ ցեղախմբի մեջ բազմաթիվ ցեղեր և անգամ ցեղային փոքր խմբեր էին գտնվում: Ամեն ինչից դատելով՝ դրանք թվում էին մատիենները և ալարոդները: Սասպեյրները մեդացիների հետ սահմանակցել են Կուր գետի ստորին հոսանքի շրջանում և Կողքիսից դեպի Մեդիա ճանապարհն անցել է Կուրի ստորին հոսանքի հովտով:

Ինչ վերաբերում է ալարոդներին, ապա Յերոզոտոսը նրանց մասին ունի ընդամենը երկու հիշատակություն՝ մեկը՝ XVIII սատրապության կազմում, մյուսում՝ հույն-պարսկական կռիվներին զինված էին, ինչպես և սասպեյրները,

¹ Տե՛ս Известия древних писателей..., -«Вестник древней истории», 1947, րիվ 1, էջ 301:

² Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 66:

³ Տե՛ս Известия древних писателей..., -«Вестник древней истории», 1947, րիվ 3, էջ 280, 282, 288:

⁴ Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 82:

⁵ Անդ, էջ 83:

⁶ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգ..., էջ 77, 80:

⁷ Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, էջ 197:

կոլխերի նմանությամբ: Ելնելով մատիենների և սասպեյրների տեղադրությունից, ալարոդները չեն կարող տեղորոշվել Հայկական լեռնաշխարհում և պետք է տեղադրվեն XVIII սատրապության հարավ-արևելքում ընդգրկելով հետագա Աղվանքի տարածքը: Ալարոդները նույնպես, ըստ էության, ունեցել են սկյուբական ծագում և պարսից արքունիքն ինչ-ինչ պատճառներով XVIII սատրապության տարածքը բերև վարչականորեն ձևավորել է սկյութական էթնիկական տարրի հիմքի վրա: Մատիենները, սասպեյրները, ալարոդները կազմել են սատրապության առանձին ենթաշրջաններ, որոնց շուրջ համախմբվել են տեղական ցեղերը:

XVIII սատրապության տեղադրության քննության տեսանկյունից կարևոր է XI և XV սատրապությունների տեղադրման պարզաբանումը, քանի որ պատմագիտության մեջ կարծիքներ կան, որ այս երկու սատրապությունները գտնվել են Այսրկովկասում: Սակայն սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ այս սատրապությունները գտնվել են Միջին Ասիայում, աշխարհագրորեն տարբեր վայրերում: Համաձայն սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների, կասպերը և վրկանները նույնանուն են. առաջինը եղել է ցեղի ինքնանունը, իսկ երկրորդը՝ նույն ցեղի տոտեմը («գայլ»), որն աստիճանաբար դառնում է էթնոնիմ և առանձին դեպքերում կրում հավաքական բնույթ: Կասպ-վրկանները ցեղային տեղաշարժման արդյունքում հայտնվում են նաև Այսրկովկասում և հետագայում վրկանները հաստատվելով Արևելյան Վրաստանի տարածքում, նրան են փոխանցում Վրկան-Վարկան-Վարջան անունը:

Երրորդ գլուխը կրում է «ԱԲԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻ XIX ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ» խորագիրը: Համաձայն Հերոդոտոսի, XIX սատրապության մեջ մտնում էին մոսքերը, տիբարենները, մակրոնները, մոսսինոյկները և մարերը¹: XIX սատրապության մեջ մտած ցեղերից երեքի տիբարենների, մոսսինոյկների և մակրոնների, մասին անտիկ աղբյուրներից շատերի տեղեկություններն ունեն սոսկ ընդհանրական բնույթ՝ առանց տեղագրական որոշակիության և գործնականում գրեթե նույնությամբ կրկնվում են: Հիմք ունենալով տիբարենների, մոսսինոյկների, մակրոնների մասին Քսենոփոնի տեղեկությունները և դրանք համեմատելով այլ հեղինակների (Հեկատոս Միլետացի, Սկիլաքս Կարիանդացի, Ապոլոնիոս Հռոդոսցի, Պլինիոս Ավագ և այլն) հաղորդումների հետ, տիբարեններին կարելի է տեղադրել Կոտայտրայի շրջանում և Կոտայտրայից արևելք, մոսսինոյկներին՝ Կեռասունից արևմուտք, իսկ մակրոններին՝ Ծանախոձոր գետի հովտում, Տրապիզոնից հարավ և հարավ-արևելք: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ դատելով որոշ աղբյուրներից, Քսենոփոնին հաջորդած ժամանակներում տվյալ ցեղերի աշխարհագրությունը ենթարկվել է փոփոխությունների և նրանք որոշակիորեն ընդլայնվել են իրենց նախնական բնակության տարածքներից:

XIX սատրապության մոսքերի և մարերի տեղադրության քննությունը հարուցում է որոշակի դժվարություններ: Խնդիրն այն է, որ տիբարեններից առաջ հիշատակվող մոսքերի փոխարեն անտիկ աղբյուրներում բազմիցս նշվում են խայրեբները: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հույն պատմիչներից միայն Քսենոփոնն է խայրեբներին տեղադրում ճորոխ գետից արևելք, հայերի հյուսիսային սահմանակցությամբ: Անտիկ աղբյուրների մեծամասնությունը խայրեբներին տեղադրում է մերձսևծովյան շրջանում, մասնավորապես Թերմոդոնի և Կեռասունի միջև ընկած տարածքում: Ամենայն հավանականու-

թյամբ, Հեկատոսի խայրեբները, որոնք գտնվել են հայերից հյուսիս¹, համապատասխանում են արևելյան խայրեբներին: Հույների համար խայրեբները հանդիսացել են երկաթը հայտնագործող ժողովուրդ և երբեմն համարվել են Սկյութիայի ժողովուրդ: խայրեբների վերաբերյալ տեղեկությունները պարզորոշ ցույց են տալիս, որ հունա-լատինական հեղինակներն այդ անվանումը ցեղանուն չէին դիտում, այլ զբաղմունքի անվանում: Ալիզոնը Հայիսի վերին հոսանքի բնակիչների անվանումն է, որն առաջացել է կամ գետանունից («աղի», «կարմիր»), կամ էլ զբաղմունքից (աղագործներ): Այուբների անունը, թերևս, կարելի է կասկած Այուբն զավառի անվան հետ, որը հարուստ էր աղահանքերով, և Հոմերոսի ալիզոնների քաղաք Այուբեն նույնացնել աղի արդյունահանությամբ զբաղվողների բնակավայրի Աղիալանի հետ, որից էլ պետք է առաջանար Աղիանը²: Վերջինիս արևմուտքից հարում էր Հայիսի ակունքների շրջանը: Իսկ նման տեղադրության դեպքում անժխտելի է, որ ըստ Հերոդոտոսի, Հայիսի վերին հոսանքի շրջանը գտնվել է Հայաստանում, ուրեմն ալիզոնները, որոնք Հայիսի վերին հոսանքի բնակիչներն էին, մտել են XIII սատրապության մեջ և մինչև մ.թ.ա. V դարն արդեն կարող էին ներգրավված լինել հայագոյացման ոլորտը և աղբյուրներում արտացոլվել Հայիս գետանվան ներքո: Հետևաբար, խայրեբների նույնացումն ալիզոններին անհիմն է, քանի որ երկուսն էլ ծագումնաբանորեն ունեն տարբեր արմատներ և միաժամանակ ծագումնաբանորեն լիովին տարբերվում են խալդայներից: խալդայ կամ խալտայ անունը հայկական ծագում ունի և կասկած է «խալտ» հասկացության հետ, որ նշանակում է «կոշտ, կոպիտ»³: «խալդայ» նշանակել է թանձրախոս և կոպտախոս մարդ և հավաքական հասկացություն է⁴: խալդայների անվան տակ ամենից առաջ հասկացվում էին սկյութեն կոչված ցեղերը, որոնք սկյութական ցեղեր էին: Այուբեն անվանումն էլ ընդհանրական էր և հեսպերիտ կոչված ցեղը (իմա սասպեյր) դրանցից մեկն էր, որն իր հետքը թողել էր Սպեր գավառանվան մեջ⁵: Այուբենները նույն խալդայներն են ընդհանրական ընկալմամբ: Տարբերությունն այն է, որ եթե խալդայների անունը հույներն իմացան հայերից և ընդունեցին որպես որոշակի ցեղի անուն, ապա սկյութենների անունը, որոնք հայերի համար հենց նույն խալդայներն էին, հույներն արդեն ընդունեցին որպես կոնկրետ ցեղի ինքնանուն, որի մասին հունական աշխարհն ուներ բավականաչափ պատկերացում: Հույները խայրեբների երկրից դուրս գալով, կրկին մտել էին Հայաստան և այդ մասին չեն իմացել: խալդայների մի մասը, որ սկյութեններն էին, մտել է Հայաստանի մեջ, ընդ որում խոսքը, հավանաբար, Գյումրիասի սկյութենների մասին է: Պատահական չէ, որ «Կյուրոպեդիա»-ի տեղեկություններում հստակ երևում է, որ խալդայներն այսպես թե այնպես կապված էին հայերի հետ և բռնել էին հայացման ուղին համարվելով «մյուս Արմեններ», այսինքն ուղղակիորեն Հայաստանի բնակիչներ, հայաստանցիներ: Հետաքրքիր է, որ Մակաբայեցիների երկրորդ գրքի, 4-րդ գլխի 47 տան *εἰ χαί ἐπί Σχυσθῶν ἔλεγον ἀπηλᾶθησαν ἀχατάγνωστοι* («Թեպետ առաջի խաղտեաց դատ վարէին, իրաւ գտանէին») սկյութը հայերեն թարգմանված է խաղտ⁶, որը վկայում է այդ անունների

¹ Տե՛ս Известия древних писателей... - «Вестник древней истории», 1947, №1, էջ 301:

² Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 105:

³ Տե՛ս Աճառյան Գր., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան 1973, էջ 323:

⁴ Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 95-97:

⁵ Աճառյան:

⁶ Տե՛ս Աղոնց Ե., Հայաստանի պատմություն, էջ 305:

¹ Տե՛ս Հերոդոտոս, III, 94:

էթնիկական համարժեքության մասին: Սակ-սկյութները հայերի համար խաղաղ-ներ են կոչվել և խաղաղների համադրումը սկյութները կոչվող որոշակի ցեղի հետ անընդունելի է, քանի որ հույների սկյութները հայերի համար նույն խաղաղներն էին: Հետաքրքիր է, որ հայկական աղբյուրները միայն Եորոխի վերին և միջին հոսանքի շրջաններում հաստատված սակ-սկյութներին են անվանում խաղաղներ, չնայած նրանք հաստատվել էին նաև Հայաստանի այլ շրջաններում, օրինակ Շակաշենում:

Խաղաղների բնակչությունը եղել է հնդեվրոպական-իրանական: Խաղաղները Սև ծովը կոչել են Կակամար, որը բաղկացած է կակա (հմմտ. հուն. կակոս «վատ», «կատաղի», «սարսափելի») և մար (հմմտ. լատ. mare «ծով») բաղադրիչներից¹:

Ավելի ուշ խաղաղների որպես մետաղագործների, զբաղմունքը հատկացվում է նաև հայերի մի մասին, որոնք անվանվում են արմենոխաղաղներ²:

Ստրաբոնի և Պլինիոս Ավագի մոտ խաղաղը և խաղաղ համարժեք են, քանի որ վերջիններիս շրջանում ևս զբաղվել են մետաղագործությամբ, երբ ավելի վաղ ժամանակների աղբյուրների վերլուծությունը ցույց էր տալիս նրանց հստակ տարբերակումը:

Ստրաբոնի ժամանակներում խաղաղ հայկական անվանումն աստիճանաբար ներթափանցել էր Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերը, տարածվել հույների շրջանում, որը և պատճառ էր դարձել, որ Ստրաբոնը խաղաղներին նույնացնի խաղաղների հետ: Խաղաղ հավաքական անունով ցեղերը, որոնք հնդեվրոպական էին, մեծ մասամբ հայացան: Ավելի ուշ Խաղաղը անունը հարավից պետք է տարածվեր հյուսիս, ընդգրկելով Տրապիզոնից մինչև Եորոխ գետն ընկած տարածքները: Խաղաղի է համարվել նաև Արեսա-Արսիքը, ճան-մակրոնների երկիրը, իսկ ավելի ուշ ժամանակներում կազմավորվում է քյուզան-դական Խաղաղի վարչական միավորը³: Խաղաղների հետ, ըստ երևույթին, կապված է նաև ուրարտական արձանագրությունների Խաղաղի ուլխի (-ուլխի-ն հայկական «աղխ»-ն է) տեղանունը, որը մենք հավանաբար նույնացնելու Խաղաղառիմին:

Այսպիսով, աղբյուրներում խաղաղները համարվել են էթնանուն, իսկ խաղաղները զբաղմունք՝ մետաղագործներ:

XIX սատրապության մեջ հիշատակվող մուսքերը թերևս պատկանել են իրանական աշխարհին և նույնանուն են արևելյան խաղաղների հետ, որոնք զբաղեցրել են արևմտյան Գուգարքը կամ Կատարգա-Կղարքը⁴: Մուսքերի տեղադրությունը Թոքատ-Շաբին-Գարահիսար-Գյումուշխանե գծի ուղղությամբ⁵ անընդունելի է, քանի որ այդ դեպքում XIII սատրապությունը չէր կարող դուրս գալ Սև ծով, որը հակասում է Հերոդոտոսի տեղեկություններին: Մուսքերի մի հատվածը ըստ սկզբնաղբյուրների, հաստատվել էր Հյուսիսային Կովկասում, իսկ մյուս խումբը՝ ներկայիս Վրաստանի Հանրապետության հարավ-արևմտյան շրջանում: Մուսքերը վրացական ցեղ չեն եղել և հետագայում աստիճանաբար լուծվել են հայկական և վրացական էթնոսների մեջ՝ իրենց անունը թողնելով

վրացական «մեսխերի» անվան մեջ: Մուսքերը որպես կոլխական ցեղ, պատկանել են իրանական լեզվաշխարհին, իսկ մուսքերը, ըստ երևույթին, թրակափոյուզիական ընդհանրությանը¹:

Ինչ վերաբերում է մարերին, ապա նրանց անունը կապված է Ամարանթի-Իմերեթի՝ իմերեթի երկրի հետ և նրանք բնակվել են Փասիս-Ռիոնի գետի վերին ու միջին հոսանքի շրջաններում, Արզնի լեռներից արևմուտք մինչև Քութայիսի շրջանը:

Քննությունը ցույց է տալիս, որ Կողքիսն ունեցել է աշխարհագրական նշանակություն և Սև ծովի հարավ-արևելյան շրջանների բնակչությունն ընդհանուր անունով կոչվել է կոլխեր: Կոլխա երկրանունը, որը ծագում է կոլխա («եզր», «կողք», «անկյուն») բառից, ցույց է տալիս, որ այն գտնվել է Սև ծովի եզրին, ափին և այն այդպես է կոչվել արևմտյան և հարավային հարևանների կողմից²: Կոլխերը հին աղբյուրներում (Հերոդոտոս, Քսենոփոն, Ստրաբոն) տարբեր ժամանակներում ունեցել են աշխարհագրական տարբեր սահմաններ:

XIX սատրապության մեջ մտել են նաև այլ ցեղեր, որոնց Հերոդոտոսը չի հիշատակում: Այլ աղբյուրներից պարզվում է, որ այս սատրապության տարածքում բնակվել են բիզերները, բեխիրները, էլեխեյրիները, խոյերը, փիլիրները, դրիլները, դուրաուները: Հնարավոր է, որ դուրաուները մոսսինոյկների էթնանունն է, քանի որ վերջինս հունարեն բառացի նշանակում է «փայտե կառույցներում ապրողներ», իսկ փիլիրները և դրիլները թերևս նույնանուն են: Էլեխեյրիների հետ, հավանաբար, կապված է Գեկրիտիկա-Էլեկտիկական վրացական եզրիսին: Վարչական առումով բեխիրները մակրոնների հետ միասին պետք է կազմեին մեկ միավոր, եթե նկատենք, որ մակրոնները տեղադրվել են բեխիրներից հարավ կամ էլ բեխիրները այս կամ այն կերպ կապվել են մակրոնների հետ: Բիզերները գտնվել են Մուսքական լեռների հարավ-արևմտյան լանջերին և մտել են մուսքերի ցեղային միավորման մեջ: Խոյերին կարելի է համեմատել «Ամարասիս»-ում հիշատակվող կոյտոսների հետ, սակայն ավելի հավանական է աշխարհագրորեն էլեխեյրիների և խոյերի նույնացումը:

Եզրակացության մեջ հանրագումարի են բերված աշխատանքի հիմնական դրույթները, որոնք հանգեցրել են հետևյալ եզրակացությունների.

ա. Հայաստանն ամբողջությամբ մտել է Արեւմեյան XIII սատրապության մեջ, որը տարեկան վճարում էր 400 տաղանդ հարկ և 20000 ցուռակ ուղարկում պարսից թագավորին Սիհրի տոնի համար: Չնայած որ, XIII սատրապության սահմանները մ. թ. ա. V դարի կեսերին ենթարկվում են վարչական վերակազմության, այդուհանդերձ Սատրապական Հայաստանը մինչև Արեւմեյան Պարսկաստանի կործանումը մնում էր տեղական անենախտում և հարուստ սատրապություններից մեկը:

բ. XVIII սատրապության սահմանը հյուսիսում անցնում էր Կովկասյան մեծ լեռնաշղթայով՝ թերևս հասնելով մինչև ներկայիս Դերբենդ քաղաքի հյուսիսային մատույցները, արևելքում Կասպից ծովով մինչև Կուրի գետաբերանը, հարավում Կուր գետով և Թեղդի լեռնաշղթայի ջրբաժանով, սահմանակցելով XIII սատրապության մեջ մտնող Հայաստանին, և արևմուտքում՝ Սուրամի լեռներով մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթան, սահմանակցելով XIX սատրապությանը:

¹ Տես Петросян С., Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 4, էջ 53-64:

² Տես Plinius Secundus C., Naturalis historiae, VI, 4, 11-12, VI, 11-29:

³ Տես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 97-98:

⁴ Տես Հարությունյան Բ., Արեւմեյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 69, 78:

⁵ Տես Хазаралдзе Н., Античная письменная традиция и вопрос о расселении мосхов в VI-V вв. до н. э., «Проблемы античной истории и культуры», I, Ереван, 1979, с. 309-312.

¹ Տես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 69, 74, 78:

² Տես Կարագոյաչյան Հ., Սեասգիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Երևան, 1998, էջ 179, 182:

- գ. XIX սատրապության սահմանն արևմուտքում հասել է մինչև Յասոնի հրվանդան, հարավում բնական սահման է հանդիսացել Պոնտական լեռնաշղթան, արևելքից իր մեջ ընդգրկելով Կատարգա-Կոարջքը՝ հասել է մինչև Արզվեթի լեռներ, իսկ հյուսիսում բնական սահմանն էին Կովկասյան լեռները, որն ավելի ուշ հասնում է մինչև Փասիս-Ռիոնի գետը: XIX սատրապությունը հանդիսացել է Աբենենյան Պարսկաստանի ամենաբազմացեղ վարչական կազմավորումներից մեկը, որտեղ նշանակալից տեղ է գրավել հնդեվրոպական-իրանական տարրը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՅԵՂԻՆԱԿԻ ՅՐԱՊՈՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Խորիկյան Յ., Սատրապական Յայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 2005, թիվ 3, էջ 173-192:
2. Խորիկյան Յ., Աբենենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, ՅՅ ԳԱԱ «Լրաբեր (հաս. գիտ.)», 2006, թիվ 1, էջ 147-157:
3. Խորիկյան Յ., Աբենենյան Պարսկաստանի XIX սատրապության էքնիկական կազմի վերաբերյալ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2, էջ 114-126:

ХОРИКЯН ОГАННЕС ГЕОРГИЕВИЧ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

АРМЕНИЯ И ЗАКАВКАЗЬЕ В АДМИНИСТРАТИВНОМ ДЕЛЕНИИ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ (ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Защита состоится 17 апреля 2007 г. на заседании специализированного совета 004 Истории Армении при Институте Истории Национальной Академии Наук Республики Армения (375019, Ереван, просп. М. Баграмяна, 24г.)

Резюме

Целью данной диссертации является исследование исторической географии Армении и Закавказья, чьи территории входили в состав сатрапии Ахеменидской Персии в VI-IV веках до н.э.

Диссертация состоит из вступления, трех глав (каждая из которых содержит разделы), заключения и списка использованных источников и литературы.

Во вступлении обосновывается актуальность и важность темы диссертации, разъясняются методологические основы работы, формулируются цели и задачи исследования, практическое значение работы, а также ее научная новизна, дается краткий обзор использованных источников и литературы.

В первой главе диссертации («Территория и границы XIII сатрапии Ахеменидской Персии») мы показали, что Армения полностью входила в состав XIII сатрапии Ахеменидской Персии и являлась одной из крупных и богатых частей Ахеменидского Ирана. Разностороннее изучение древних источников подтверждает, что Пактике включал в себя Кесарию-Мазаку и прилегающие районы и до середины V века до н. э. входил в состав сатрапской Армении. В середине V века до н. э. по неизвестным причинам Пактике, черноморские владения вышли из состава сатрапии и до падения Ахеменидской империи сатрапия не подвергается новым административным изменениям. Исследование показывает, что в Пактике персидская «Царская дорога» проходила через Кесарию-Коману Золотую-Кокисону и доходило до Мараша. Последний входил уже в состав Киликийской сатрапии. После потери Пактике «Царская дорога» в сатрапской Армении проходила по линии Зевгма-Урха-Верашехир-Мардин-Мибин. К востоку от Мибина находилась Ассирия. В сатрапскую Армению входили также будущие части (ашхари) Великой Армении-Корчайк и Парскаайк. Сатрапскую Армению от X сатрапии разделяли Кармир-гет и Ерасх. Междуречье Куры и Ерасха находилось в Армении, которую река Кура и Трелкские горы разделяли от XVIII сатрапии. Граница XIII и XIX сатрапии проходила по Понтийскому хребту. Между мысом Ясона и Термодонтской рекой XIII сатрапия выходила к Черному морю. В этническом смысле сатрапская Армения почти была однородна.

Во второй главе диссертации («Территория и границы XVIII сатрапии Ахеменидской Персии») мы показали, что XVIII сатрапия не находилась в Армянском нагорье. В состав XVIII сатрапии входили скифские племена

матиены, саспиры, алародии, вокруг которых сплотились местные племена. Локализация XVIII сатрапии позволила показать, что XI и XV сатрапии находились в Средней Азии, занимая разное географическое положение, и всякая попытка локализации их в Закавказье не соответствует исторической действительности. Согласно данным первоисточников, каспии и гирканы идентифицировались: первое является самоназванием племени, второе - тотемом племени каспиев ("волк"), который со временем превращается в этноним собирательного характера.

Северная граница XVIII сатрапии проходила по Кавказскому горному хребту, доходя к северным подступам современного города Дербент, на востоке от Каспийского моря до устья реки Куры, южная граница проходила по реке Куре и Трелкских гор, граничащая с XIII сатрапией, а на западе от Сурамских гор до большого Кавказского хребта, граничащая с XIX сатрапией.

В третьей главе диссертации ("Территория и границы XIX сатрапии Ахеменидской Персии") мы показали, что если локализация тибаренов, макронов, моссинойков согласно источникам достаточно устойчивое, то локализация мосхов и маров имеет некоторые трудности. Упомянутые в XIX сатрапии мосхи, пожалуй принадлежали к иранской языковой семье и идентифицировались с восточными халибами, которые занимали Западный Гугарк. А мары находились в стране Амаранти-Имерети.

Исследование показало, что население юго-восточного Причерноморья называлось общим именем колхи и Колхида имела географическое значение. Обратили внимание на тот факт, что согласно источникам халден (=скифы) считались этнонимом, а племена занимающимися металлургией назывались халибами.

Разностороннее изучение античных первоисточников показывает, что каждый этнос, входящий в состав сатрапий Ахеменидской Персии, являлся или отдельным племенем или племенным союзом, административным соединением которых (мосхи, тибарены, макроны, моссинойки, мары) образовывалась сатрапия. По сведениям источников можно сделать вывод, что в географическом отношении XIX сатрапия делилась на 2 округа. В первый входили территории, которые занимали макроны, тибарены, моссинойки, а во второй - территория, занятая мосхами, марами и другими колхскими племенами, до Кавказских гор, позднее до реки Фасис-Риони. Исследование показывает, что XIX сатрапия являлась многоплеменным административным соединением, где индоевропейский-иранский элемент был значительно сильнее.

В заключении диссертации сделаны выводы по основным рассмотренным в работе вопросам.

Данное исследование может представлять интерес как для изучения исторической географии, так и для политической истории и этнографии Армении и Закавказских стран в период ахеменидского господства.